6

<< 30 >> 01 2023թ. Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին

/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ __14_____

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ոստիկանության Մասիսի բաժնի պետ,ոստիկանության գնդապետ՝ Վ.Պ.Գրիգորյանս քննելով <<20>> 01 2023թ. Թիվ 14 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ Արարատի մարզի Նորամարգ բնակավայրի Ազատության փողոցի 71 տան բնակիչ Արկադի Մելիքի Ավակյանը /ծնվ.03.07.1955թ./ 20.01.2023թ-ին ժամը 16:00-ի սահմաններում գտնվել է Մասիս քաղաքի Երևանյան փողոցի հասարակական տրանսպորտի կանգառի ծածկի տակ օգտագործելով ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արկադի Մելիքի Ավակյանին

/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը,ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ գումարով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____

/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը՝ << >>_____2023թ. _____

Ոստ.Մասիսի բաժնի պետ _____ Վ.Պ.Գրիգորյան